Առակագրություն

Միջնադարյան առակը արձակ շարադրանքով, գեղարվեստական հորինվածքով, բորոյախրատական բովանդակությամբ փոքրածավալ ստեղծագործություն է: Նրանում իրականությունը պատկերվում է այլաբանորեն, մարդկանց և անձնավորված կենդանիների միջոցով: Հիմնական իմաստը երբեմն բացահայտվում է վերջում՝ սեղմ բարոյախոսական եզրակացությամբ: Առակի մի տարատեսակն է զրույցը, որտեղ գործող անձինք մարդիկ են...

Առակն առաջացել է ժողովրդական բանահյուսության մեջ և ապա անցել գրականությանը՝ որպես փոքրածավալ պատմողական արձակի տեսակ՝ առակագրություն:

Հնագույն առակագրության ամենախոշոր դեմքը հույն հեղինակ Եզովպոսն է (Ք. ա. 6-րդ դար): Նրա առակների մի մասը դեռևս վաղ միջնադարում թարգմանվել է հայերեն:

Գրիգոր Մագիստրոսը և որոշ այլ հայ հեղինակներ իրենց երկերում մեջբերել են հատուկենտ ժողովրդական առակներ, որոնք, սովորաբար, արհամարհվել ու մերժվել են եկեղեցական մատենագրության մեջ:

12-րդ դարից սկսած, գրականության աշխարհիկացման հետևանքով, ժողովրդական բանահյուսության որոշ տեսակներ արդեն մուտք են գործում գրականության մեջ: Տեսանք, որ դարի մեծագույն հեղինակը՝ Ներսես Շնորհալին, գրականացրել է բանահյուսական ժանր հանդիսացող հանելուկները:

Նույն այդ ժամանակ, ահա, գրականացվում են նաև առակներն ու զրույցները: Առակագրության ասպարեզում հանդես են գալիս երկու խոշոր հեղինակներ՝ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին:

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

(մոտ 12-րդ դարի վերջ - 1250)

Ապրել է 12-րդ դարի վերջին և 13-րդ դարի սկզբին: Նա միջնադարյան հայ աստվածաբան է, մատենագիր, առակագիր, քարոզիչ և հասարակական գործիչ:

Իր խրատներով ու քարոզներով Վարդան Այգեկցին պայքարում է դրամասիրության, գողության, ամբարտավանության, ոխակալության, որկրամոլության, հարբեցողության, մարդկային այլ արատների դեմ, քարոզում սեր և համերաշխություն:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ խոշոր առակագիրն է: Ապրել է 12-րդ դարի վերջին և 13-րդ դարի սկզբին: Ստացել է վարդապետի աստիճան և զբաղվել քարոզչությամբ: 1210 թվականից մինչև կյանքի վերջը ապրել ու գործել է Սև լեռան Այգեկ վանքում, ուստիև կոչվել է Այգեկցի:

Ծնվել է Հայոց Միջագետքի Դլուք (Տլուք) գավառի Մարաթա գյուղում: Կրթվել է նախ ծննդավայրում, ապա՝ Կիլիկյան Հայաստանի Արքակաղին վանքում: Կենսագրական տեղեկություններ չեն պահպանվել: Իր գործերի հիշատակարաններում եղած որոշ տվյալներից պարզվում է, որ ինքն իրեն կոչել Է Մարաթացի: Սովորել է ծննդավայրում, այնուհետև՝ Սև լեռների Արքա-կաղին վանքում, ստացել վարդապետի աստիճան, զբաղվել քարոզչական գործունեությամբ, նախ՝ Ամիթում (այստեղից էլ՝ նաև Ամթեցի), ապա՝ Դլուքում: 1198 թ. մասնակցել է Կիլիկիայի Լևոն Բ թագավորի թագադրության հանդեսին: Ինչ-ինչ պատճառներով հալածվել է և 1208 թ. հարկադրված հեռացել հայրենի վայրերից: Երկու տարի թափառելուց հետո հաստատվել է Սև լեռների Դոսխ (Տոսխ) կոչված այգեվետ ձորում հիմնադրված Այգեկ վանքում (այստեղից էլ՝ Այգեկցի) և զբաղվել գրական գործունեությամբ, այստեղ գրել է իր քսաներկու ճառերը, խրատական հինգ թղթերը՝ ուղղված իր հոգևոր սան, Անտիոքի եպիսկոպոս Միքայելին, ուրիշ թղթեր ու խրատական գրություններ: Աշխատություններից շատերն ունեցել են հեղինակի ձեռքով գրված մեկից ավելի ընդօրինակություններ, հաճախ խմբագրական բնույթի տարբերություններով: Խրատներից մեկը գրված է 1229 թ.:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Այգեկցու անունով հայտնի են երկու տասնյակից ավելի ճառեր: Դրանց մեջ նա եռանդուն պայքարել է հայության ազգային ու բարոյական նկարագրի անաղարտության համար, պարսավել է մարդկային արատները, հանդես եկել ժողովրդական լայն խավերի իրավունքների պաշտպանությամբ՝ երազելով տերերի ու հպատակների ներդաշնակ ու համերաշխ հասարակություն: Իր ճառերն ազդեցիկ ու ավելի հասկանալի դարձնելու համար Այգեկցին դրանք համեմել է առակներով ու զրույցներով: Այդպիսով նա սկիզբ է դրել առակավոր ճառի տեսակին: Նա գրել է ավելի քան 30 առակներ և զրույցներ՝ քաղելով ու վերամշակելով հայ բանահյուսությունից, ինչպես նաև Եզովպոսից և այլ

գրավոր աղբյուրներից: Մեծ թիվ են կազմում նաև իր իսկ՝ Այգեկցու հորինած այդ ժանրի գործերը:

Ինչպես իր ճառերում, այնպես էլ դրանց համապատասխան առակ-զրույցներում, Այգեկցին դատապարտել է որկրամոլությունը, հարբեցողությունը, ոխակալությունը, զազրախոսությունը, խաբեությունը, անմտությունը, դավաճանությունը, վախկոտությունը: Եվ եթե ճառերում դա արել է իրեն բնորոշ ճարտասանական վարպետությամբ, ապա առակներում գործի է դրել ժողովրդական առողջ հումորը, սրամտությունն ու իմաստությունը, պարզ ու հակիրճ պատմելաոճը:

Ինչպես Մխիթար Գոշի, այնպես էլ Վարդան Այգեկցու առակներն ու զրույցները աշխահիկ ոգու հաստատման առաջընթաց քայլեր են միջնադարյան հայ գրականության մեջ:

Այգեկցին առաջ է քաշել և զարգացրել իր նախորդի որոշ գաղափարներ: Այսպես, նրա «Եզը և ձին» առակը գաղափարապես մերձ է Գոշի «Ոսկին և ցորենը» առակին: Երկուսի մեջ էլ ամենաբարձր արժեքն է համարվում աշխարհը շենացնող ու լիացնող տքնաջան աշխատանքը: Երբ ձին պարծենում է՝ ասելով, թե թագավորներն ու իշխաններն իրեն զարդարում են ոսկով ու արծաթով և բազմում իր վրա, եզը հակադարձում է. «Ամբողջ աշխարհի բարեկեցությունն եմ ես, որովհետև ես եմ վաստակում, չարչարվում և հոգնում, իսկ դու և քո թագավորն ուտում եք: Բոլոր մարդիկ ուտում են իմ վաստակը, եթե չվաստակեմ, դու և քո թագավորն իսկույն կմեռնեք»:

Հիշարժան է նաև «Եկեղեցին և ջրաղացը» առակը: Այստեղ էլ եկեղեցին է պարծենում՝ ասելով, թե ինքն Աստծո տաճարն է, և ժողովուրդն աղոթելու համար իր մոտ է գալիս: Դրան ի պատասխան՝ ջրաղացն ասում է եկեղեցուն. «Ես գիշեր-ցերեկ աշխատում եմ և դատում այ́ն, ինչ ուտում են քահանաներն ու ժողովուրդը, և դրանից հետո են քեզ մոտ գալիս աղոթելու»:

Բարեբեր աշխատանքն է իսկական գանձը. այս է ուսուցանում «Կտակ գանձի մասին» զրույցը, որտեղ աղքատ և իմաստուն հայրը, իբր այգում թաղված գանձերը գտնելու համար, իր ծույլ որդիներին ստիպում է փորել հողը՝ ասելով, թե «գանձը կգտնի նա, ով շատ աշխատի և խորը փորի»: Եվ այդ աշխատանքն իսկապես գանձ է դառնում, քանի որ փորված-մշակված այգին բերք ու բարիք է պարգևում:

Ստեղծարար աշխատանքից բացի Այգեկցու առակներում գովաբանվում է նաև բանական մարդը: Վերջինս իր հնարամտությամբ հաղթում է անգամ ամենազորեղ գազանին («Առյուծը և մարդը»):

Այգեկցին ևս իր առակներով ձգտել է նպաստել ժողովրդի մարտական ոգու ուժեղացմանը: Նա ուսուցանում է, որ խաղաղ ժամանակ արդեն պիտի պատրաստվել պատերազմի՝ հաղթելու կամ այն կանխելու համար («Վարազը և աղվեսը»): Եվ պատերազմ պիտի գնալ ոչ թե փախչելու, այլ կռվելու և հաղթելու մտադրությամբ: Այս է ուսուցանում «Իմաստուն զինվորը» առակը, որտեղ կարդում ենք. «Առակագիրը, սակայն, դեմ է անիմաստ և փուչ պատճառներից ծագող պատերազմներին» («Մի կաթիլ մեղրը պատերազմի պատճառ»):

Հատկապես սուր երգիծանքով են հորինված Այգեկցու այն առակներն ու զրույցները, որոնք վերաբերում են արատավոր հոգևորականներին: Ամենաբնորոշ օրինակն է «Գող քահանան և այրի կինը» զրույցը: Այստեղ հեղինակը ժողովրդական հումորով պատմում է, թե ինչպես մի քահանա գողանում է այրի կնոջ կովը և, դիմելով սրբապղծության, գողացած կովին թաքցնում է եկեղեցու բեմում: Այրի կինը՝ իմանալով այդ, բացում է բեմի վարագույրը և դիմելով կովին՝ ասում է. «Ո՜վ գարշելի, ես քեզ կով գիտեի, և այժմ քեզ ո՞վ կարգեց պատարագիչ»:

Մեկ այլ առակ պատմում է այն մասին, թե ինչպես մի աղքատ մարդ ջուրն է գցում Ավետարանը, քանի որ քահանան քարոզում է, բայց չի կատարում Ավետարանում գրված աստվածային պատվիրանները («Աղքատն ու Ավետարանը»):

Այգեկցու քննադատությունն ու երգիծանքը երբեմն անուղղակիորեն ուղղվում են Աստծուն: Այսպես, մեղք գործել ցանկացող մենակյացը վախենում է ոչ թե Աստծո պատժից, այլ իր վրա հարձակված գամփռ շնից («Միայնակյացը և գամփռ շունը»): «Աղքատի աղոթքը» զրույցում արդեն հնչում է արդարացի բողոքն Աստծո դեմ: Այստեղ մի աղքատ և հիվանդ մարդ խնդրում է Տիրոջը՝ տուն հասնելու համար մի գրաստ ուղարկել իրեն: Բայց գալիս է մի չար հեծյալ, ծեծում է աղքատին ու ստիպում շալակել ձիու քուռակին: «Վա՜յ ինձ, Աստվա՜ծ իմ,– ասում է հիվանդ աղքատը,– փոխանակ թեթևացնելու, ծանրացրիր վիճակս»: Այդ բողոքն առավել սուր երգիծանքով է հնչում «Այրի կինը և խորթ որդին» զրույցի մեջ, որտեղ հնչում է այրի կնոջ պարզամիտ բողոքը. «Ո՜վ Աստված, մի՞թե չկարողացար էշը կովից տարբերել»:

Նման առակների երևան գալը գրականության մեջ վկայություն էր այն պատմական իրողության, որ հասարակության մեջ գնալով նահանջում էր հավատն ու վստահությունը հոգևորականության, Եկեղեցու և անգամ Աստծո նկատմամբ: Այդ երևույթը շատ ավելի սուր պիտի արտահայտվեր ժամանակի բանաստեղծության մեջ, Վարդան Այգեկցու կրտսեր ժամանակակից Ֆրիկի

գանգատական բանքերում...

Այգեկցու առակներում առկա է նաև հանրային դժգոհությունն աշխարհիկ տերերից: Դա ևս արտահայտված է սուր երգիծանքով: Երբ մի աշխարհական իշխանավոր ձգտում է, օրենքները ոտնահարելով, հասնել իր ուզածին, իմաստուններից մեկը համարձակվում է ասել նրան. «Դու ամեն ազգից դուրս ես. քեզ վրա իշխանություն չկա, ինչ կամենաս՝ կարող ես անել» («Իշխանավորը և իմաստունը»):

Շատ ավելի տարածված է Այգեկցու «Իշխանը և այրի կինը» զրույցը, որն արտացոլում է ժողովրդի և բռնակալի փոխհարաբերությունը: Ահա այն.

«Մի իշխան կար, խիստ չար ու անիրավ: Նույն քաղաքում ապրում էր մի այրի կին, և իշխանը, հարկ պահանջելով, նեղում էր նրան, և այրի կինն աղոթում էր, որ իշխանը երկար կյանք ունենա:

Գնացին ասացին իշխանին, որ քո չարության համար աղոթում է այրին: Եվ իշխանը եկավ ու ասաց նրան.

– Ես քեզ բարիք չեմ արել, ո՞վ կին, դու ինչո՞ւ ես աղոթում ինձ համար:

Այրի կինն ասաց.

– Քո հայրը վատ մարդ էր, ես անիծեցի, և նա մեռավ: Հիմա դու նստեցիր նրա տեղը՝ ավելի խիստ ու չար եղար: Եվ այժմ վախենում եմ, որ դու մեռնես ու քո որդին քեզնից ավելի չար լինի»:

Վարդան Այգեկցու առակների ու զրույցների ժողովածուները միջնադարի ամենասիրված ընթերցանության գրքերից են եղել: Ժամանակի ընթացքում դրանք հարստացել են այդ ժանրի նորանոր գործերով և լայնորեն տարածվել ձեռագիր ու տպագիր օրինակներով՝ հիմնականում «Աղվեսագիրք» կոչված ժողովածուներով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ է Վարդան Այգեկցին, գեղարվեստական ու գաղափարական ի՞նչ բովանդակություն ունեն նրա առակները:
2. Ի՞նչ տարբերություն կա Մխիթար Գոշի և Այգեկցու առակների միջև:
3. Վերարտադրի՛ր գրողի կենսագրությունը, ներկայացրո՛ւ ապրած ժամանակաշրջանը, միջավայրը և կապիր նրա ստեղծագործության հետ (անհատական աշխատանք):

Կյանքը	Ապրած ժամանակաշրջանը	Միջավայրը	Կապը ստեղծագործության հետ

4. Ստեղծագործաբար վերաշարադրեք առակների բովանդակությունը՝ մեկնաբանելով առակների արտահայտած բարոյախոսությունը:
5. Առակների բովանդակությունը վերարտադրեք՝ գործածելով հեղինակային բառապաշարը:
6. Համեմատեք և համադրեք առակների կերպարները՝ կապելով այսօրվա իրականության հետ:
7. Բացատրեք ձեր նախընտրած առակի վերնագրի ու բովանդակության կապը: Հիմնավորեք:
8. Այգեկցու առակները համեմատեք Գոշի առակների հետ՝ վենի գծակարգով նշելով նմանությունները, տարբերությունները և ընդհանրությունները:
9. Ի՞նչ սովորեցիք առակներն ուսումնասիրելիս: Արտահայտեք ձեր դիրքորոշումը: